**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի» վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր»

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 08.08.2024թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 19.02.2025թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 40 մլն ԱՄՆ դոլար
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2029թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.07.2039թ. - 15.01.2049թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր

**Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի էներգետիկ անցումը ապահովող ծրագիր**
**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 03.02.2025թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 03.02.2025թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված գումարը՝** 40 մլն ԱՄՆ դոլար
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2029թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.07.2039թ. - 15.01.2049թ.

**Ծրագրի նպատակը՝** ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումը էլեկտրահաղորդման ցանցում և բարելավել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը:

**Ակնկալվող արդյունքները՝** Ծրագրի իրականացման արդյունքային ոլորտներն են՝
- Ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների իրականացում
- Գործառնական բարելավումներ
- Մեծածախ էներգետիկ շուկայի հետագա ազատականացում

- Սակագնային նոր մեթոդաբանության ներդրում
- Ընկերության կողմից միջազգային վարկային վարկանիշի ստացում
- Կորպորատիվ կառավարման համակարգերի բարելավում և արդիականացում

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝**

2024թ. դեկտեմբերին հայտարարված «Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատուի» ծառայությունների ձեռքբերման նախաորակավորման ընթացակարգը 2025թ. հունվարին հայտարարվել է չկայայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը:

2025թ. փետրվարին հայտարարվել է «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատուի» ծառայությունների ձեռքբերման նախաորակավորման ընթացակարգ, որի արդյունքում հայտ ներկայացրած «Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊԸ-ն ներառվել է նախաորակավորված մասնակիցների ցուցակում: Մարտի 21-ին ընկերության կողմից ստացվել է մասնակցության հայտ:

Ծրագիրն իրականցվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: